

Հայրենադարձությունը որպես Հայաստանի և հայության փրկության ճանապարհ

Արմեն Այվազյան

1. Հիմնական հարցադրումներ

Հայաստանում և արտերկրում բնակվող հայության տարանջատվածությունն իր կնիքն է դնում հայ ազգի արդի զարգացման բոլոր բնագավառների վրա՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգևոր: Ըստ այսմ էլ՝ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները կարիք ունեն խոր ու բազմակողմանի ուսումնասիրության: Հայաստանի նորանկախ պետությունը՝ իր արտաքին ու ներքին քաղաքականությունն իրապաշտորեն մշակելու և գործադրելու, ինչպես նաև սփյուռքի հետ արդյունավետ համագործակցություն կազմակերպելու համար՝ պետք է ճիշտ պատկերացումներ ունենա հայության աշխարհասփյուռք բեկորների և ներազգային հարաբերությունների մասին: Հայաստանի և հայության առջև ծառայած բարդագույն խնդիրները լուծելու գլխավոր նախադրյալներից են սփյուռքի հետ առողջ և դինամիկ հարաբերությունների հաստատումը, հայության բոլոր հատվածների գործունեության նպատակային համադրումը: Զետևաբար՝ Հայաստան-Սփյուռք հարաբերություններն անմիջականորեն կապված են Հայաստանի ազգային անվտանգության բնագավառի հետ: Հայաստանում (ներառյալ՝ կառավարության մակարդակի վրա) սփյուռքի մասին պատկերացումների հիմքում, ցավոք, ընկած են անձնական կամ յուրայինների սահմանափակ և չվերլուծված շփումներն ու փորձառությունը: Սփյուռքի նկատմամբ տարվող քաղաքականությունը կառուցվել ու շարունակում է կառուցվել ոչ թե ճիշտ ու համապարփակ տվյալների և դրանց վրա կատարված վերլուծությունների, այլ իրականությանը չհամապատասխանող կաղապարային կարծիքների և չհիմնավորված հաշվարկների վրա [\[1\]](#): Հայկական սփյուռքն ուսումնասիրված է առավելաբար պատմական, փաստանկարագրողական մոտեցումով, պակաս չափով՝ սոցիոլոգիական, ազգագրագիտական ու մարդաբանական եղանակներով: Սակայն սփյուռքը բացարձակապես

ուսումնասիրված չէ ԶՅ ազգային անվտանգության տեսանկյունից, որն այսօր առաջնային նշանակություն ունի: Արդ, անդրադառնանք այդ հարցերից մի քանիսին:

Սփյուռքի մասին ամենատարածված տեսակետը

Սեզանում սփյուռքը շարունակում է դիտվել իբրև բացարձակ դրական արժեք: Հայաստանում և արտերկրում ամենատարածված տեսակետն այն է, որ սփյուռք ունենալը մեծ բարիք է [2]: Հայաստանի ամենաբարձրաստիճան այրերից ոմանք նույնիսկ կարծում են, որ խիստ ցանկալի է հայերի հաստատումն աշխարհի այն երկրներում, որտեղ նրանք դեռ չեն բնակվում: 1999 թ. սեպտեմբերի 11-ին Ազգային Հեռուստատեսությամբ, պատմելով Հեռավոր Արևելքի երկրներ կատարած իր այցելության մասին, ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը բառացիորեն ասաց. «Ափսոս, որ Հարավային Կորեայում հայեր չեն ապրում: Շատ լավ կլիներ, որ այդ երկրում էլ հայեր ապրեին»: Արտգործնախարարի այս անկեղծ հայտարարությունը մասամբ բացատրվում է պարզ գերատեսչական շահով՝ հայկական համայնքի առկայությունը Հարավային Կորեայում էապես կիեշտացներ Հայաստանի արտգործնախարարության աշխատանքը այդ պետության հետ, ներառյալ՝ գուցե դեսպանության հաստատումը: Բայց տարօրինակ է, որ նախարարին բոլորովին չի հուզում, թե հայերը Հարավային Կորեա կարող էին արտագաղթել կամ Հայաստանից՝ նվազեցնելով հայրենիքի առանց այն էլ կրիտիկապես ցածր գծին հասած ազգաբնակչությունը, կամ արդեն փոքրիշատե կազմակերպված համայնքներ ունեցող այլ երկրներից՝ թուլացնելով հայ ավանդական գաղթօջախները, զուգահեռաբար նաև առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով ուժացման համար: Նույն միտքն, արդեն գրավոր տեսքով, արտահայտում է սփյուռքահայ հայտնի մտավորական, Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Լևոն Ջեքիյանը. «Եթե նույնիսկ Սփյուռք չունենայինք՝ բաղձալի կըլլար, որ Սփյուռք մը ստեղծեինք: Քանի վրացիի որ հանդիպած եմ, զգացած եմ իրենց մեջ ցավ մը, գրեթե «նախանձ» մը (բարի կամ ոչ՝ ըստ անձին), որ իրենք Սփյուռք չունին [3]: Թեև պրոֆ. Ջեքիյանն այնուհետև նշում է, որ «այս չի նշանակեր, որ իյնանք մյուս ծայրահեղության մեջ, թե Հայաստանը պարպենք, որ Սփյուռքը զորացնենք» [4], սակայն սփյուռքը բարիք համարելու նրա դիրքորոշումը հստակ է: Ջեքիյանն ակնհայտորեն համաձայն

չէ, որ «սփյուռքային իրավիճակը ըմբռնվի լոկ իբր հայրենիքէ և հողէ զրկում, լոկ իբր անցման շրջան մը, սոսկ ժխտական հղացումներով, առանց որևէ դրական բովանդակության: Ներկայիս, ինչ որ զգալիորեն կնշմարվի Սփյուռքի մտավորականության բավական ընդարձակ մեկ հատվածին մեջ, խորացումի շարժում մըն է՝ ի խնդիր Սփյուռքի դրական արժեքներուն, դրական մտահղացումին ու դրականորեն իբր այդ ապրումին» [5]: Այլուր Ձեքիյանը թվարկում է արտերկրում ապրած հայերի բերած նպաստը հայկական մշակույթի զարգացմանը (տպագրություն, լուսավորչական գաղափարներին ծանոթություն և այլն) [6], սակայն մոռանալով նշել, որ, նախ՝ նույն և անհամեմատ ավելի մեծ նվաճումներ հայերը կարձանագրեին հայրենիքում, եթե օտար նվաճողներն այն ավերած ու ստրկացրած չլինեին, և, երկրորդ, որ այդ կարգի բոլոր ձեռնարկումների գլխավոր նպատակը եղել է հայրենիքի գոյապայքարին աստարելը, մի օր այն անկախ և հզոր տեսնելը, իսկ հաճախ էլ՝ արտերկրում հայ մշակութային ու քաղաքական գործունեությունը մտահղացվել, ծրագրվել ու կազմակերպվել է հենց հայրենիքից (օրինակ, ազատագրական շարժումների մեծ մասը, տպագրության գործը և այլն):

ԶՅ արտգործնախարարի և վեներտիկցի պրոֆեսորի այս տեսակետը մասամբ արտահայտում է ժողովրդի մտայնության մեջ վաղուց արմատավորված մակերեսային մտապատճեն (ստերեոտիպ), որը հայ քաղաքական մտքի երկարատև բացակայության հետևանք է [7]: Ավելին՝ գնալով հաճախակի կարելի է լսել մի նոր, չափազանց վտանգավոր տեսակետ, որով Հայաստանի՝ հայության կյանքում ունեցած տեղը, կշիռն ու դերակատարումը թերագնահատվում են, հայրենիքը և ազգային պետականությունը համարվում են երկրորդական, իսկ հայերի ցրված և անորոշ նպատակներով գոյատևումը՝ առաջնային: Այսպես, նույն Լևոն Ձեքիյանի մոտ կարդում ենք հետևյալ թեզերը. «Ամբողջ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա, նույնպես վտանգավոր է: Հայաստանի ավելի քան 25-դարյա պատմության ընթացքում մենք տեսել ենք և՛ պետականություն, և՛ անկախություն, և՛ նույնիսկ կայսրություն: Այդ ամենը եղել է, անցել է, նորից կրկնվել է, նորից անցել է և նորից վերադարձել է: Բայց անփոփոխ է մնացել մի բան՝ հայ ժողովրդի գոյությունը: Սա պետք է պահպանել: Ահա սա է մեր հիմնական նպատակն ու խնդիրը: ...Մեր պատմության մեծ մասի

ընթացքում մենք ապրել ենք առանց պետականության» [\[8\]](#) :Ընդգծենք առաջ քաշված դրույթների փաստական սխալները.

1) հայոց պատմությունը ոչ թե «ավելի քան 25-դարյա» է, այլ առնվազն կրկնապատիկ ավել [\[9\]](#).2) մեր պատմության մեծ մասի ընթացքում մենք ապրել ենք՝ ունենալով ազգային պետականություն (դրանում համոզվելու համար պետք է պարզ թվաբանական հաշվարկ կատարել).

3) պրոֆ. Ջեքիյանի այն թեզը, թե «ամբողջ հայ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա՝ վտանգավոր է»՝ արտառոց է մի քանի առումով: Աշխարհագրական կետը, որի մասին նա խոսում է՝ Հայաստանն է (ավելի շուտ դրանից մնացած 1/10-րդ բեկորը): Թե այդ երբևանի՞ց Հայաստանը դարձավ հայերի «իրադրային կենտրոն»՝ պարզ չէ: Իրականում՝ Հայաստանը հայերի համար ոչ թե «իրադրային կենտրոն է», այլ՝ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայրենիքում կենտրոնանալ՝ հայահավաքը, վտանգավոր լինել չի կարող, մինչդեռ հայրենիքից դուրս ցրվելը և անխուսափելի ճուլմանը ենթարկվելը ոչ միայն վտանգավոր է, այլև կործանարար: Սա պարզից էլ պարզ ճշմարտություն է, որը լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունի: Իսկ հայերի համար «իրադրային կենտրոններ» են եղել ու կան հայրենիքից դուրս գտնվող մեր բոլոր գաղթօջախները, այդ թվում՝ Վենետիկն ու Վիեննան, Լոս Անջելեսն ու Մոսկվան, Փարիզն ու Լոնդոնը և մյուսները: Առավել ևս տարօրինակ է, որ հայրենիքում հայերի կենտրոնացումը վտանգավոր է համարվում այսօր, այս օրհասական պահին, երբ Հայաստանի բնակչությունը մեկ տասնամյակում գրեթե կրկնապատիկ նվազել է, իսկ արտագաղթը դադարելու միտումներ չի դրսևորում [\[10\]](#) : Հայ ազգը կարող է գոյատևել ու զարգանալ միմիայն հայրենիքի առկայության պայմաններում: Ի տարբերություն հրեական սփյուռքի, որը պատմական այլևայլ նպաստավոր պայմանների բերումով մոտ երկու հազարամյակ գոյատևեց առանց հայրենիքի, հայկական սփյուռքն՝ առանց Հայաստանի պատմության ընթացքում երբեք ու երբևէ չի եղել ու չի կարող լինել, առավել ևս՝ հետինդուստրիալ զարգացման ու գլոբալացման այս նոր դարաշրջանում: Հայաստանի վերջին բեկորից հայերի դուրս մղումը, նրանց՝ որպես պետականորեն կազմակերպված մի հավաքականություն զարգացման դադարեցումը, կտանի հայությունը դեպի արագընթաց ոչնչացում: Ուստի և՛ սփյուռքի զարգացման ռազմավարությունը կարող է ունենալ մի ելակետ՝

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, այսինքն՝ Հայաստանի տնտեսական, ժողովրդագրական, ռազմական, մշակութային հզորացմանն ուղղված գործունեություն: Հայաստանակենտրոն գործունեության միջոցով միայն կարող են ամրանալ ու վերընթաց զարգացում ապրել Սփյուռք-Հայաստան կապերն ու սփյուռքահայ կյանքը:

2. Կազմակերպված ներգաղթը որպես հայ ժողովրդի փրկության ու զարգացման միջոց

Ներկա համակարգային ճգնաժամից դուրս գալու, ամուր պետություն կառուցելու համար Հայաստանին երկարատև ժամանակաշրջան տրված չէ, այլ այդ հնարավորությունն առկա է լինելու ընդամենը ևս մի քանի տարի, առավելագույնը՝ մեկ տասնամյակ: Այս եզրակացությանն է հանգեցնում թեկուզ միայն ժողովրդագրական աղետալի իրավիճակի թռուցիկ գնումը: 1991-2001 թթ. Հայաստանում (ներառյալ Արցախում) ազգաբնակչության թիվը պակասել է 1-1.5 միլիոնով, ներկայումս կազմելով 2,5 միլիոնից ոչ ավելի մարդ, գուցե և ավելի պակաս (2001 թ. Հայաստանում 3 միլիոն մարդ «հայտնաբերած» ՀՀ վիճակագրական ծառայության հաշվարկը ակնհայտորեն չափազանցված է): Եթե նկատենք, որ 1995-2001 թթ. Հայաստանից տարեկան հեռացել են միջինը 50-60 հազար մարդ, ապա արտագաղթի նույն տեմպերի պահպանման դեպքում (իսկ դրանց պահպանվելու համար բոլոր միտումներն առկա են), 2010 թ. Հայաստանում բնակվելու է շուրջ 1,5-2 միլիոն մարդ, ընդ որում արտագաղթողների մեջ դարձյալ մեծ տոկոս են կազմելու երիտասարդությունը և մասնագիտական բարձր պատրաստություն ունեցողները: Հասկանալի է, որ այս ծերացած ու պակաս կրթված մարդուժն անընդունակ կլինի պահանջված քանակով համալրելու Հայաստանի անվտանգության հիմնական երաշխիքը հանդիսացող Հայկական բանակը, զարգացնելու Հայաստանի տնտեսությունը, պայքարելու սոցիալական արդարության նվազագույն պահանջները հարգող՝ բարեկեցիկ ու ժողովրդավարական պետություն կառուցելու համար (իսկ առանց ժողովրդի ճնշման՝ այդպիսի պետություն երբեք չի կառուցվի): Ստացվում է կախարդական շրջան. արտագաղթը ծնում է զարգացման համար անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք իրենց հերթին ծնում են արտագաղթ: Ուստի արտագաղթը պետք է կանգնեցվի ամեն գնով, այլապես այն ոչ թե

դադարելու, այլ անդադար շարունակվելու է: Ժամանակն է դարձանել ու փոխհատուցել Հայաստանից տեղի ունեցած մեծ արտագաղթի հետևանքները: Ժամանակն է ծրագրել ու իրականացնել ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՆԵՐԳԱՂԹ, որի գլխավոր առանձնահատկությունը լինելու է ոչ թե հանպատրաստից հայրենադարձությունը, այլ աշխատանքի և բնակության հարցերի նախնական մանրակրկիտ ուսումնասիրությունն ու հստակ լուծումը (ստորև այս գաղափարը հանգամանորեն պարզաբանելու ենք): Հայրենադարձությունը որպես խնդիր, զարմանալիորեն, բացակայում է սփյուռքահայ կազմակերպությունների օրակարգերից: Ընդհակառակը, ներգաղթը կարծես «տաբու» է դարձել Հայաստան-Սփյուռք ամեն կարգի և մակարդակի հանդիպումներ-քննարկումներում, այդ թվում՝ Հայաստան-Սփյուռք Ա և Բ համաժողովներում: Ո՛չ Հայաստանի ներկա ֆիկտիվ պետությունը [\[11\]](#), ո՛չ էլ սփյուռքահայ ավանդական կառույցները զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու որևէ հետաքրքրություն ու շահագրգռվածություն չունեն: Բարեբախտաբար, ի տարբերություն անցյալի, ներկա պատմական ժամանակաշրջանն ու հենց գլոբալացումը, որը մեզ համար մինչև այժմ հիմնականում բացասական ու վտանգավոր հետևանքներ է ունեցել՝ տալիս են հայրենադարձության խնդիրը անհատական ու խմբական մակարդակի վրա լուծելու աննախադեպ հնարավորությունները, այդ թվում՝ Հայաստանի վիզային «ազատական» ռեժիմը, մարդկային հոսքերի մեծապես աճած շարժունակությունը (մոբիլությունը), բոլոր տեսակի տեղեկատվության առկայությունը մոլորակի ամենահեռավոր վայրերում, սփյուռքահայերի տնօրինած կապիտալի բավարարությունը՝ Հայաստանում սեփական տունն ու գործը հիմնելու համար: Կազմակերպված ներգաղթը նախատեսում է մի քանի փուլ.

1. Արտերկրում բնակվող ու հայրենադարձվել ցանկացող հայ ընտանիքները միմյանց հետ կապ կհաստատեն ու կկազմեն փոքր խմբեր՝ բաղկացած 3-ից մինչև 50 կամ ավել ընտանիքներից:
2. Յուրաքանչյուր խումբ կհավաքի մի ընդհանուր դրամագլուխ՝ Հայաստանում տնտեսական այնպիսի գործունեություն կազմակերպելու համար, որը հայրենիքում կապահովի խմբի անդամ ընտանիքներին աշխատանքով և ապրուստով: Յուրաքանչյուր ընտանիքի շահաբաժինը հավասար կլինի նրա կատարած ներդրմանը:

3. Յուրաքանչյուր խումբ պետք է 2-3 ամսով (գուցե մեկից ավել ամսամ) Հայաստան գործուղի իր ներկայացուցիչներին տեղում շուկան ուսումնասիրելու, աշխատանքի և բնակության պայմանները նախապատրաստելու համար:

4. Հայրենադարձությունը կարող է իրականացվել պայմաններին համապատասխան՝ խումբը կճանապարհվի հայրենիք մաս-մաս կամ ամբողջ կազմով (որը մեծ տպավորություն կթողնի սփյուռքահայ զանգվածների վրա):

Հայրենադարձվողները որևէ կառույցից կախման մեջ չեն լինելու և չափազանցված ակնկալիքներ չեն կարող ունենալ, քանի որ Հայաստանում նրանց սպասելու են իրենց իսկ գնած (կամ կառուցած) տունն ու տեղը և իրենց իսկ ստեղծած աշխատանքային գործունեությունը: Առաջին ակիբի մեջ, հավանաբար, լինելու են նախկին հայաստանցիները, որ նշանակում է, թե նրանք նաև քաջածանոթ են լինելու Հայաստանի ներկա տնտեսական, իրավական ու այլևայլ պայմաններին և լինելու են իրատես:

Անգամ միջին չափերի կազմակերպված ներգաղթը կլուծի հայ ազգի և պետականության առջև կանգնած և անլուծելի թվացող մի շարք հանգուցային խնդիրներ:

1. Ժողովրդագրական. Հայաստանը հայաթափ լինելու վրահաս աղետից կարող է փրկել միայն ու միայն բազմահազարանոց հայրենադարձությունը:
2. Տնտեսական. կազմակերպված ներգաղթը կտրուկ կբարելավի երկրի տնտեսական դրությունը, քանի որ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ հայրենիք են վերադառնալու իրենց իսկ նախապատրաստած աշխատատեղերը գործարկելու, ուստի երկրի տնտեսությունը ստանալու է զարգացման շատ հզոր ազդակ, զգալիորեն ընդլայնվելու են նեքին շուկան ու սպառողական հնարավորությունները: Բացի այդ՝ հայրենադարձներն իրենց հետ Հայաստան են բերելու զգալի կապիտալ: Միացյալ Նահանգներից ու զարգացած մյուս երկրներից վերադարձող յուրաքանչյուր 5 հոգանոց ընտանիք իր հետ կարող է Հայաստան բերել միջինը մոտ 30.000 ԱՄՆ դոլար: Այս ամենահամեստ հաշվարկով, 20 հազար ընտանիքը

(100.000 մարդ) Հայաստան կերի 600 միլիոն, 40 հազար ընտանիքը (200.000 մարդ) 1,2 միլիարդ, 60 հազար ընտանիքը (300.000 մարդ) 1,8 միլիարդ, 100 հազար ընտանիքը (500.000 մարդ) 3 միլիարդ դոլար:

3. Բարոյահոգեբանական. հայրենադարձվողները, նոր ավյուն ու եռանդ հաղորդելով հայրենիքին, կտրուկ կբարելավեն հայաստանաբնակ ժողովրդի բարոյահոգեբանական անտանելի ծանր հոգեվիճակը: Նրանք կթուլացնեն լարվածությունը երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներում՝ սկսած հայրենիքի պաշտպանությունից ու տնտեսությունից, վերջացրած ազգաբնակչության իրավական պաշտպանվածությամբ: Վերջին տարիներին Հայաստանից դուրս գտնվող մեր շատ հայրենակիցներ (ոչ բոլորն, իհարկե) ապրել են հարաբերականորեն ավելի լավ պայմաններում, քան Հայաստանում մնացածները: Հայրենադարձները կկատարեն ճիշտ նույն դերը, ինչ կատարում են ռազմաճակատներում թարմ զորագնդերը, երբ հարկ է լինում նրանցով փոխարինել հոգնած ու հյուժված, թեկուզև՝ ընտրելագույն ջոկատները:
4. Իրավական. հայրենիքում մշտական բնակություն հաստատողները չեն հանդուրժելու իշխանական ապօրինությունները, նրանք բոլորովին նոր ու հուժկու թափ են հաղորդելու Հայաստանում սոցիալական արդարության ու հավասար իրավունքների համար ընթացող պայքարին: Սրան նպաստելու է հատկապես այն, որ նրանք ունենալու են և՛ տնտեսական որոշակի անկախություն և ինքնուրույնություն, և՛ որոշակիորեն կազմակերպված են լինելու իրենց խմբի շրջանակում: Դրանով իսկ Հայաստանում աննախադեպ զարգացում է ապրելու իրավական դաշտն ու պաշտպանվածությունը:
5. Մշակութային. հայրենիքում մշտական բնակություն հաստատողները նպատակ են ունենալու սովորեցնել զավակներին հայերեն, ներգրավվել հայկական

մշակույթի մեջ ու ապրել հայեցի վարքուբարքով (այլապես նրանք Հայաստան վերադառնալու ցանկություն չեն էլ ունենա) [12]: Դրանով իսկ ուժգին հարված կհասցվի Հայաստան թափանցած ապազգային, հակամշակութային այլանդակ երևույթներին:

6. Գիտական. Հայաստան մուտք կգործեն օտար լեզուներ իմացող բազմաթիվ պատանիներ ու երիտասարդներ, որոնց հետագա նպաստը հայրենի գիտությանը վիթխարի է լինելու:
7. Հայապահպանական. հայրենադարձությունը կփրկի արտերկրի հայությանը անխուսափելի ձուլումից՝ սպիտակ ջարդից: Միով բանիվ՝ պատմական այս փուլում համայն հայության առաջին խնդիրը՝ կազմակերպված ներգաղթն է: ԱՌԱՋԻՆ ՀԱՐՅՈՒՐՆԵՐԻՆ ԿՅԵՏԵՎԵՆ ՀԱԶԱՐՆԵՐԸ, ՀԱԶԱՐՆԵՐԻՆ՝ ՏԱՍՆՅԱԿ ՀԱԶԱՐՆԵՐԸ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սփյուռքագետ Էդվարդ Մելքոնյանն առաջարկում է սփյուռքի տեղեկատվական բանկ հիմնել և տեղին նկատում. «Խոսում ենք սփյուռքի ֆինանսատնտեսական, մտավոր ներուժի մասին ընդամենը կցկտուր տեղեկությունների վրա հիմնվելով: Մինչդեռ առաջարկվող տեղեկատվական բանկը պետք է ներառի սփյուռքի մասին ոչ միայն ընդհանուր տեղեկություններ, այլև մանրամասն ներկայացնի տվյալ երկրի, նրա առանձին քաղաքների հայազգի բնակչության քանակական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտամշակութային ողջ բնութագիրը, սփյուռքում առկա կարևոր գործընթացները: Առանց այսպիսի տեղեկատվական հիմքի՝ անհնար է սփյուռքի հետ համագործակցության ճիշտ ծրագրումը» (տե՛ս Նանե Մակուչյան, «Հայաստան-սփյուռք հարաբերությունների ամբողջական մոդել. սփյուռքի հետ հարաբերությունների սկզբունքներն ու մեխանիզմները՝ սփյուռքագետ, նախկին փոխարտգործնախարար Էդվարդ Մելքոնյանի տեսակետից». -- Ազգ, 26 հունիս 1998):

2. Մասամբ այս կարծիքից, մասամբ էլ՝ օտարամոլությունից է գալիս այն վնասակար և անհարկի պաշտամունքը, որին արժանանում են արտերկրում նշանավոր դիրքի հասած ծագումով հայերը, հաճախ՝ նույնիսկ անկախ նրանց Հայաստանի և հայության շահերին խորթ և անտարբեր լինելու փաստից:

3. Վենետիկյան միջանվագ: Աշխատասիրությանը՝ Ռուզան Չաքարյանի: Երևան, «Ապոլոն» հրատ., 2000, էջ 107: Նույնանման մի հայտարարություն էլ արել էր հայտնի արվեստագետ Հենրիկ Իգիթյանը. «Չկա չարիք առանց բարիքի: Հայերի այս վերջին արտագաղթն ահագին ուժեղացրել է սփյուռքը: Հայաստանն ու սփյուռքը մեկմեկու օգնում են»: Սրան ի պատասխան «Իրավունք» թերթի մեկնաբանն իրավացիորեն նկատել էր. «Ձարմանալի է, թե ինչպես որևէ մեկը... կարող է արտագաղթի մեջ ինչ-որ լավ բան տեսնել». -- Իրավունք, հունվար 25-31 2002 թ. (#5/575):

4. Նույն տեղում: Տե՛ս նաև “ ծՈ տՐՈՉՈւ փցՁպրՑՐՈվՓՈ (ՀՈջՎօՔսպվՈ՛ տՐՏԷպրրՑՐՈ – Տ տՐՏոսպՎՈւ վՈՓՈՏվՈսՖվՏՀՏ ըՈՎՏրՏջվՈվՈ՛, Տ ՉջՈՈՎՏՏՑվՏՔպվՈ՛ւ ՐՏՊՈՎօ Ռ ըտ՛ՐՍՈ)”, ծՏՉՏպ ՉՐպՎ՛, 25 ՎՈ՛ 2002 չ. (No. 842):

5. Նույն տեղում: Տե՛ս նաև “ Վենետիկյան միջանվագ, էջ 94:

6. Լեւոն Չեքիեան. Ինքնութեան խճանկար: Աշխատասիրեց Սալբի Գասպարեան: Պէյրուք, 2001, էջ 73-74:

7. Ինքս լավ հիշում եմ 1970-ական թթ. սկզբին ավագ սերնդի ազգականներիս միջև կայացած մի գրույցը և դրա եզրահանգումը, թե՛ «սփյուռք ունենալը լավ է, քանի որ, ի տարբերություն սփյուռք չունեցող ազգերի, միջուկային պատերազմի դեպքում՝ երկիր մոլորակի վրա հայերի վերապրումն ապահովված կլինի»: Սույն մտապատճենի առաջացումը, սակայն, կարիք ունի առանձին պատմահոգեբանական հետազոտության, որն այս ուսումնասիրության նպատակներից դուրս է:

8. “ծՈ տՐՈՉՈւ փցՁպրՑՐՈվՓՈ”, ծՏՉՏպ ՉՐպՎ՛, 25 ՎՈ՛ 2002 չ.. հմմտ. Վենետիկյան միջանվագ, էջ 144:

9. Մեկ այլ առիթով՝ Չեքիյանը խոսում է հայերի՝ «3000ամյա

ժողովուրդ» լինելու մասին, որ անում է 30-դարյա պատմություն (Լեւոն Ձեքիեան. Ինքնութեան խճանկար, էջ 71):

10. Ակամայից վերհիշում ես Խորհրդային Հայաստանի երբեմնի վարչապետ (ՀԽՍՀ Կենտոգործկոմի նախագահ, 1924-1928 թթ.) Ա. Կարինյանի 1924 թ. տպագրած մի հոդվածը, որտեղ մասնավորապես ասված է. «Երկրի մեջ 300 հազար արևմտահայ գաղթականությանն էլ պետք է ցրել լայնածավալ Ռուսաստանի մեջ... Այդ ձևով իր հիմքի մեջ կխեղդվի ամեն մի ազգայնական փորձ և կստեղծվի ավելի ամուր պատվանդան Մերձավոր Արևելքի ժողովուրդների միության համար: Վերջ տալ հայության հավաքման գաղափարին Հայաստանում, մի գաղափար, որ մինչև այժմ էլ ապրում է ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ա) Հայաստանը հողային ազատ ֆոնդ չի ունեցել, չունի և նախատեսելի ապագայի մեջ չի կարող ունենալ:

բ) Այդ ֆոնդի բացակայությունն է եղել պատճառը, որ զարգանա ազգայնական ռոմանտիկան և հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին»:

գ) Այդ ֆոնդի բացակայությունն է պատճառը, որ նաև այսօր վառ ու կենդանի է «միացյալ և անկախ Հայաստանի» գաղափարը ժողովրդական զանգվածների մեջ: Սրանից ելնելով պետք է վերջ դնել հայության հավաքման գաղափարին Հայաստանի մեջ». -- «Արձագանք Փարիզի» (Ազգային քաղաքական շաբաթաթերթ, ապա կիսամյա թերթ, ապա տասնօրյա, 1916-1925), 1924 թ. նոյեմբերի 26:

11. Այս մասին տե՛ս Արմեն Այվազյան. «Հայության համակարգային ճգնաժամի և հայկական պետության ֆիկտիվության մասին». - Լույս երկշաբաթագիր (Լոս Անջելես), ապրիլ 2002, No. 5 (146), Վասն հայության (Երևան), ապրիլ 16 (#14), 30 (#15), մայիս 14 (#16), 2002; Օր (Երևան), մայիս 16, 18, 21 (#19, 20, 21), Իրավունք (Երևան) մայիս 31, 2002 (#41/628).

12. Մեր սկզբունքային անհամաձայնությունն ենք հայտնում հարգարժան ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի այն մտքին, որ ներգաղթը խրախուսելու համար պետք է մի կարգ սահմանել, որով «այն երեխաները, որոնք արտասահմանում սովորում են միջին և

բարձր դասարաններում, վերադառնալիս, կրթությունը պետք է շարունակեն այն լեզվով, որով կրթություն են ստացել: Չպետք է կիրառել այն հարկադրանքը, որ, եթե հայ են, անպայման շարունակեն կրթությունը հայերեն: Միևնույն է, ժամանակի ընթացքում նրանք կտիրապետեն մայրենի լեզվին» (Վ. Ե. Խոջաբեկյան. Հայաստանի բնակչության վերարտադրությունը..., ԵՂՎ. աշխ., էջ 452-453): Այս առաջարկությունը ոչ միայն հակազգային ու հակապետական է, այլև անիրագործելի, որովհետև որևէ երկրում հնարավոր չէ ստեղծել կրթական այնպիսի համակարգ, որը կապահովեր տասնյակ լեզուներով տարվող միջնակարգ կրթություն, քայքայելով երկրի ապագան հենց դպրոցից: Անձամբ անկեղծորեն հարգելով ակադ. Վ. Խոջաբեկյանին որպես հայրենասեր գիտնականի ու քաղաքացու, կարծում ենք, որ նրա առաջարկությունը հեշտությամբ սրբագրելի է. ընդամենը պետք է պայմաններ ու որոշակի ժամանակ հատկացնել վերաբնակ աշակերտներին և ուսանողներին՝ հայոց լեզվի մեջ հմտանալու համար:

Immigration of Armenians abroad to Armenia a guarantee for salvation of the Armenian people

Armen Ayvazyan

Summary

Armenians outside of Armenia live in about 60 countries. Author investigates the benefits of the immigration of these armenians to Armenia both from cultural and economical views. He finds that this event will guarantee recovery of the republic most likely possible and it is a way for salvation of whole Armenian people.

مهاجرت ارمنیان خارج به ارمنستان به عنوان راهی برای رهایی خلق ارمن

آرمن آيوآزيان

چکیده مقاله

ارمنیان خارج از ارمنستان در حدود ۶۰ کشور زندگی می کنند. پژوهشگر در این مقاله به منافع معنوی و مادی مهاجرت ارمنیان به ارمنستان می پرتازد و معتقد است که این پدیده در صورت وقوع می تواند به عنوان راهی برای رستگاری خلق ارمن بویژه در شرایط سخت کنونی مطرح گردد.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ՝
ՂԱՐԱԲԱՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԾՐԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

23-24 ապրիլի 1919թ.

0228 104/19 գ/ստ

Համագումարի բոլոր անդամների կողմից միաձայն ընդունված ստորագրված բանաձևերը:

Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը 1919թ. ապրիլի 23-ին (ն.թ.) յուր պաշտոն նիստում լսելով Անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Շատելֆորտի Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը եւ այն քննելով նույն համագումարի ապրիլի 24-ին (ն.թ.) պաշտոնական նիստում - որոշեց.

1. Միանգամյան կողմնակից և ծարավ լինելով կարգի և խաղաղության վերահաստատմանը Ղարաբաղում:

2. Բոլոր ցանկությամբ և անկեղծությամբ ընդառաջ գնալով անգլիական հրամանատարության առաջարկին՝ խաղաղ բարեկամական հարաբերություն պահպանել հարևան թուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրագործել Ղարաբաղի հայությունը:

3. Ի նկատի ունենալով, որ Ղարաբաղի վերաբերյալ տերիտորիալ և սահմանային հարցերը պետք է վերջնական լուծում ստանան խաղաղար կոնֆերանսում, ինչպես և ինքը գեներալ Շատելֆորտը հայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամավորներ ուղարկող Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկության և կենսական շահերին, ինչպիսի համախոսականներ և գրավոր իմպերատիվ մանդատներ տվել է նա յուր ընտրած պատգամավորներին:

Համագումարն անընդունելի է համարում Ադրբեջանի հետ որևիցե

առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ ստեղծելու ազգամիմիջյան լուրջ խռովություններ ու արյունահեղություններ, որի պատասխանատվությունը յուր վրա վերցնել ոչ մի դեպքում չի կարող Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը:

Ստորագրել են դիվանի անբողջ կազմն ու 48 պատգամավորները:

1919թ. 23-ին ապրիլին (մ.թ.) Շուշի Ղարաբաղի «Հայկական հինգերորդ համագումար»:

Լեռնային Ղարաբաղ, էջ.164, փաստ. N 105.

ՀՀ ԿՊՊԱ (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Պետական Պատմական Արխիվ) ֆ. 199, ց.2, գ.38, ք.27, տպագիր օրինակ:

ՀՀ ԿՊՊԱ 1919-04-23

Final Declaration of the Fifth Congress of the Armenians of Artsakh (Karabagh)

Summary

On 23th of April, 1919 The Fifth Congress of the Armenians of Artsakh Declares:

1-We are are agreed with establishment of peace in Artsakh.

2-Armenians insist on having good neighborhood with Turks.

3-Congress doesn't agree with proposal of British commander, because territorial problems between armenians and turks should be solved in the peace conference.

The Congress rejects any plan about administrative relations between Artsakh and Azerbaijan.

قطعنامه تائيد و امضاء شده از طرف

همه اعضاء شرکت کننده در کنگره پنجم ارمنیان آرتساخ

کنگره پنجم ارمنیان قراباغ در جلسه غیر رسمی خود بتاريخ ۲۳ آوریل ۱۹۱۹ با دریافت برنامه و طرح اداری ژنرال شاتلورث نماینده فرماندهی انگلیس در مورد حکومت موقت آرتساخ و پس از بررسی آن در جلسه ۲۴ آوریل تصمیمات زیر را اتخاذ نمود:

- ۱- با برقراری صلح و ثبات در آرتساخ کاملاً موافق است.
- ۲- ارمنیان آرتساخ بر اساس پیشنهاد فرماندهی انگلیس، با کمال میل و صداقت روابط دوستانه و صلح آمیز خود را همچون همیشه با مردم همسایه ترک حفظ می نمایند.
- ۳- با توجه اینکه، اختلافات ارضی و مرزی آرتساخ باید نهایتاً در کنفرانس صلح حل و فصل شود، همچنانکه ژنرال شاتلورث این مطلب را اعلام کردند، کنگره پنجم ارمنیان آرتساخ بر آن است که این طرح با منافع حیاتی و خواست خلق ارمن که با ارائه تقاضاهای جمعی و کتبی به نمایندگان خود اعلام داشته تطابق ندارد.

کنگره، هر گونه طرح ارتباط اداری با آذربایجان را غیر قابل قبول می داند و اجرای قهر آمیز این طرح را به عنوان محرک و انگیزه اختلافات شدید قومی و وقوع خونریزی می شمارد و مسئولیت آن را پنجمین کنگره ارمنیان آرتساخ تحت هیچ شرایطی به عهده نمی گیرد. این سند را تمام اعضاء دبیرخانه و ۴۸ نماینده امضاء کرده اند.

پنجمین کنگره ارمنیان آرتساخ

"ماخذ: آرشیو اسناد دولتی ارمنستان، ۱۹۹۱، ۳۸، ۲۷، چاپ شده، رونوشت"

Armenia in the Holy Bible

English Bible, dated 1634, published by John Bill in London

by: Mark A. Galustian

1. Genesis: 5:32

"And Noah was five hundred years old: and Noah begat Shem, Ham, and Japheth. "

Japheth was the progenitor of the so-called Caucasian race. This appellation was first initiated by German anthropologists of the 18th century who advanced the theory that the white race originated in the Caucasian area.

2. Genesis: 8:4

"And the ark rested in the seventh month, on the seventh day of the month upon the mountains of Ararat."

Noah's ark did not come to rest on Mount Ararat (Massis in Armenian) but on the mountains of Ararat or Armenia. It is very strongly believed that the first five books (Pentateuch) of the Bible were written by Moses and another Moses of Khorene stated in his history that Ararat was the central portion of Armenia.

There are other spellings and derivations of the word Ararat:

- a) Arardhi: The earliest known form as copied from an Assyrian inscription of King Asurnatsirpal who reigned from BC 883 to 858.
- b) Urardhu: as copied from an Assyrian inscription referring to the lands of proto-Armenian King Sarduris II(BC 754 to 727).
- c) Urartu: Later applied to the regions ruled by a new dynasty of kings who ruled in the Lake Van area but calling those lands Nairi and Biaina.

d) Ararat: The Hebrew word for Armenia devoting highlands.

Let us be mindful of the fact that the Assyrians were overly boastful of their prowess in arms and their stone-carvers were not supplied with up-to-date dictionaries! At least, the intelligent Hebrews stuck to one spelling, namely Ararat.

3. Genesis: 10:1,2,3

"Now these are the generations of the sons of Noah; Shem, Ham and Japheth: and unto them were sons born after the flood.

"The son of Japheth; Gomer, and Magog, and Madai, and Javan and Tubal, and Meshech, and Tiras.

"And the sons of Gomer; Ashkenaz, and Riphath, and Togarmah".

To continue this genealogy further, Togarmah beget Haik(2), according to the acknowledged critics of the Bible and the traditions of the early Armenian writers. Armenians consider themselves as the House of Togarmah or Torcom and sometimes spelled Thorgom. This is partially confirmed by the discovery of a cuneiform inscription referring to the fortified town of Tilgarimnu near Malatia in ancient Armenia.(3) Another proposition is the view that Togarmah is made up from two words, namely, "take" meaning tribe or race in Sanskrit and Armah (Armenia).4

4. Kings II: 19:36-37

" So Sennacherib King of Assyria departed, and went and returned, and dwelt at Nineveh.

"And it came to pass, as he was worshipping in the house of Nisroch his god, that Adrammelech and Sharezer his sons smote him with the sword: and they escaped into the land of Armenia. And Esarhaddon his son reigned in his stead. "

This act of patricide was committed in 710 B. C., and the King of Ararat [Armenia) was Rusas II, who was a contemporary of Esarhaddon of Assyria BC 681 to 668. However, the Armenian historians state that the King of Armenia was Hsga-vorti, which means "son-of-a-giant" in Armenian. The two Assyrian brothers were made welcome and married Armenian princesses. Their descendants became notable princely families, namely Artsrouni and Gnouni.

The proto-Armenians, or Urartu ancestors, left us only rock-incised inscriptions and ruins which are only now coming to light for critical examination. Our early native historians did not have a "British Museum" to rely upon and our Saint Gregory the Illuminator was too eager to destroy and blacken our pagan past in his zeal to replace it with the new religion.

5. Isaiah: 37:37-38

Here we find the identical words as stated in Kings II: 19:36-37.

6. Jeremiah: 51:27

"Set ye up a standard in the land, blow the trumpet among the nations, prepare the nations against her, call together against her the kingdoms of Ararat, Minni, and Ashkenaz; appoint a captain against her, cause the horses to come up as the rough caterpillars.

"Prepare against her the nations with the kings of the Medes, the captain thereof, and all the rulers thereof, and all the land of his dominions."

In 538 BC, King Tigran of Armenia contributed to the capture and overthrow of wicked Babylon with his Armenian army. Tigran was a firm friend of the Persian monarch Cyrus, who led the combined Medo-Persian army. The prophet Jeremiah made these summons about a century before the destruction of the Babylonian Empire.

7. Ezekiel: 27:14

"They of the house of Togarmah traded in thy fairs with horses and horses and mules."

Amongst other nations and people the Armenians brought horses and mules to the mart of Tyre, located present-day Lebanon. The Armenians were great breeders of horses, fatten and conditioned on the fruitful pastures of their uplands. In those early days, Armenian horses were as famous as the Arabian horses of today.

8. Ezekiel: 38:6

"Gomer, and all his bands; the house of Togarmah of the north quarters, and all his bands: and many people with thee. "

The army of Gog, the chief prince the land of Magog, had as component allies in the war against Palestine, the armies of Torcom (Armenia).

The Armenians are part and parcel the Genesis and the rest of the Old Testament.

REFERENCES

1. Sayce, "The Races of the Old Testament," page 44.
2. Haik was the father of the Armenian people and the founder of the Armenian Kingdom in 2350 BC, which expired with Levon VI, in 1375 AD, or lasting for a period of 3,725 years.
3. Delitzsch, "Commentary on Genesis," Vol. I, page 310.
4. Rawlinson, "The Origin of Nations, " page 183.